



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

14.582

AN

Ն. ԽԱՐԻՏՈՆՈՎ



„ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ“
ԻՄ ՊԵՐԻԱԿԻԶՄԻ
Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Լ

32

Ռ-35

ՊԵՏՂԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

32

14-35 n 8 MAY 2013

26 SEP 2006

1 DEC 2009

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ

Ն. ԽԱՐԻՏՈՆՈՎ

ЦЕНТР. ГОСБИБЛИОТЕКА Т.С.С.Р.
№ 240/2

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆ
Ի ՎԵՐԵՆԻՆԻ ԿՐԹԱԳՐԱԴԱՐԱՆԻ
ԲՆԱՎԱԾՈՒՄԸ

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»
ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԳՈՐԾԱԿԱԼ



1931 1931 1931

1931 1931 1931

14582

ՄԵՆՔ ՄՏՏԵԼ ԵՆՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ

Մենք մտել ենք սոցիալիզմի շրջանը,—ասաց ընկ Ստալինը Համկոմկուսի (բ) 16-րդ համագումարում Սոցիալիզմն ամուր հաստատվել է մեր արդյունաբերության մեջ: Կապիտալիստական տարրերը վտարված են մեր տնտեսության հրամայող բարձունքներից—արդյունաբերությունից: Սոցիալիստական շինարարությունը լայն քայլերով առաջ է շարժվում, ձեռք բերելով նորանոր հաջողություններ:

Յերբ մենք կազմում ելինք տնտեսության զարգացման հնգամյա պլանը, բուրժուական թերթերը գուշակում էյին, վոր մանք հազիվ թե այդ պլանը իրագործենք 50 տարում: Մեր սեփական գիտնական մասնագետներից մի քանիսը կարծում էյին, վոր 10 տարուց ավելի շուտ մենք չենք կարող իրագործել հնգամյա պլանը: Նույնիսկ կուսակցության մեջ կային մարդիկ—աջ ոպորտունիստներ,—վորոնք կարծում էյին, թե հնգամյա պլանը անիրագործելի յե, և առաջարկում էյին դանդաղեցնել սոցիալիստական շինարարության տեմպերը: Իսկ ի՞նչ յեղավ: Իրականում այն յեղավ, վոր մենք հնգամյա պլանը կատարում ենք վոչ թե հինգ, այլ չորս տարում: Մեր արդյունաբերության միջանի ճյուղերում հնգամյա պլանը



43221.63

Հրատ. № 1566

Գրառեսպոստ № 6234 (բ) Գրատիր № 1698 Տիրութ 6000

Պետհրատի տպարան Յերեանում

կիրառործվի ավելի շուտ: Որինակ, նավթի և տորֆի արդյունաբերության մեջ հնգամյակին իրագործվում է 2 և կես տարում: Մեքենաշինարարության և էլեկտրոտեխնիկական արդյունաբերության մեջ՝ յերեք տարում:

Հեղափոխության 13 տարիների ընթացքում մենք կառուցել ենք 2222 գործարաններ, 320 էլեկտրոկայաններ և 20.000 կիրոմետր նոր լերկաթուղիներ: Մինչև հեղափոխությունը Ռուսաստանի ամբողջ արդյունաբերությունը տարեկան տալիս էր 70 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենա, իսկ մեղ մատ, միայն Ռուստովի «Սելմաշատրոլը», վորն այժմ աշխատում է, կտա տարեկան 100 միլիոն ռուբլու գյուղատնտեսական մեքենա: Այժմ արդեն ավարտված է Ստալինգրադի տրակտորագործարանի կառուցումը: Այս գործարանը տալու է տարեկան 50.000 տրակտոր: Ժամկետից շատ ավելի վաղ ավարտվեց Թուրքեստան—Սիրիբ յերկաթուղագծի կառուցումը: Աբադ տեմպերով առաջ է գնում աշխարհիս ամենախոշոր էլեկտրոկայանի՝ Դնեպրոստրոլի շինարարությունը, ինչպես և սետադագործական գործարան-հսկաների կառուցումը Ուրալում, Սիրիբում, Դնեպրում: Այժմ կառուցվող գործարաններն ու Ֆարիկաներ կառուցանան 12 միլիարդ ռուբլի, այսինքն ավելի, քան առժեյին ցարական Ռուսաստանի բոլոր գործարաններն ու Ֆարիկաներ:

Կապիտալիստական յերկրներում, որինակ, Ամերիկայում, իրենց համար ամենալավ, ամենահաջող տարիներում նույնիսկ արդյունաբերությունն աճել է շատ-շատ տարեկան 6—7 տոկոս: Իսկ մեղ մտա, ար-

դեն հնգամյակի առաջին տարիներում արդյունաբերության արտադրանքը միջին հաշվով աճում է տարեկան 36 տոկոսով: Ընկ. Կուլբիշեր կուսակցության 16-րդ համագումարում նշեց, վոր քաղաքացիական պատերազմից հետո 6 տարի պետք յեղավ, վորպեսզի մենք կարողանալինք հասնել արտադրության նախապատերազմյան մակարդակին: Վերջին յերեք տարվա ընթացքում մենք կարողացանք կրկնապատկել մեր արդյունաբերությունը՝ համեմատած նախապատերազմյանի հետ: Իսկ հնգամյակի միմիայն 3-րդ տարվա ընթացքում մեր արդյունաբերությունը կտա յերեք անգամ ավելի արտադրանք, քան մինչև պատերազմը:

«Մենք առաջ ենք գնում արագ քափով, սեխնիկա-սեխանկան սեսակետից հասնելով առաջավոր իմպերիալիստական յերկրներին»,—ասաց ընկ. Ստալինը կուսակցության 16-րդ համագումարում:

Սոցիալիզմը խոշոր հաղթանակներ է տանում նաև մեր գյուղատնտեսության մեջ: Գյուղացիության միլիոնավոր աշխատավոր մասսաները վճռականորեն յերեսը դարձրել են դեպի սոցիալիզմի, կոլեկտիվացման ուղին: Կոլխոզային շինարարության հնգամյա պլանը իրագործված է յերկու տարում մեծ գերազանցումով: Կոլխոզների ցանքսերի տարածությունը հասել է 36 միլիոն հեկտարի: Խոշոր սոցիալիստական հողագործությունը, — սովխոզները և կոլխոզները, — վոչ միայն փոխարինել է, այլև մեծ չափով զերազանցել է կուլակային տնտեսությունների հացի արտադրությանը: Համատարած կոլեկտիվացման հիման վրա մենք վերացնում ենք կուլակությունը՝ վորպես դասակարգ: Կոլտնտեսությունների և խորհրտնտեսու-

թյունների աճումը հնարավորություն տվեց մեզ հաջող կերպով լուծել հացի խնդիրը և կարգավորել աշխատավորների հացի մատակարարումը: Անասնաբուժական խորհանտեսությունների և կոլտնտեսությունների շինարարության միջոցով մենք կկաբողանանք շատ շուտով լուծել նաև մսի մատակարարման հարցը: Բամբակի և ճակնդեղի ցանքերի տարածություն լայնացումը հնարավորություն կտա մեզ 1931 թվին կրկնապատկել շաքարի արտադրությունը և մեծ չափով լայնացնել տեքստիլ արդյունաբերությունը:

Մեր արդյունաբերությունը ամուր հիմք է տալիս գյուղատնտեսությանը, ապահովելով նրա սոցիալիստական զարգացումը: Արդեն յեկող արի մեզ մոտ արտադրվելու յեն ավելի գյուղատնտեսական մեքենաներ, քան Ամերիկայում:

Առանձնապես արագ է աճում տրակտորների արտադրությունը: Այս տարի մեր գործարանները տվին 13.000 տրակտոր, իսկ յեկող տարի կտան 58.000 տրակտոր: Մեր գյուղատնտեսությունը գնալով էլ ավելի յե դինվում նորարարյն տեխնիկայով: Աշխատավոր գյուղացիության հիմնական մասայի շրջադարձը դեպի սոցիալիզմը՝ հնարավորություն տվեց մեզ ձևանարկելու կուլակուլթյան լիկվիդացիային՝ վորդես դասակարգ, համատարած կոլեկտիվացման հիման վրա: Կոլխոզների աճումը և կուլակուլթյան վերացումը էլ ավելի յայնորեն բաց են անում մեր գյուղատնտեսության ճանապարհը դեպի սոցիալիզմը:

Բանվոր դասակարգը, միլիոնավոր կոլխոզնիկները և Խորհրդային Միության բոլոր աշխատավորները աշխատում են անդուլ, տալով իրենց բոլոր ու-

ժերը սոցիալիստական շինարարության գործին: Մեր ամբողջ յերկրում հնչում է գործարանների և ֆաբրիկաների, խորհանտեսությունների ու կոլտնտեսությունների աշխատանքային փոխադարձ կանչը: Ամբողջ Խորհրդային Միության մեջ հնչում է մարտական, պրոլետարական հրամանը:

Լարել բոլոր ուժերը:

Հիտ չմնալ:

Հավասարվել առաջիններին:

Տիրոջ արթուն աչքով նայում է բանվոր դասակարգը յուրաքանչյուր գործաբանին, յուրաքանչյուր հանքին, յուրաքանչյուր հնոցին, խորհանտեսության, կոլտնտեսության:

Արդյոք ամժեր է դրված մեր սոցիալիստական շինաշարունթյան հիմքը: Արդյոք ամեն ինչ յր տեղն է մեր մեծ շինաշարունթյան սեղ: Արդյոք վորեն մեկը հետ չի մնում մեր հարվածային աշխատանքում:

Գործարանների, ֆաբրիկաների, կոլտնտեսությունների, խորհանտեսությունների սոցիալիստական մրցումն ապահովում է հնգամյակի յրագործումը չոքս տարում: Հարվածայինները յրենց հետեից տանելով բոլոր բանվորներին, գերակատարում են յրենց ձեռնարկությունների պլանները: Միմիայն Մոսկվայի մարզում 150-ից ավելի յոշորագույն ձեռնարկություններ գերակատարել են հնգամյակի յերկրորդ տարվա պլանը ժամկետից առաջ: Հոկտեմբրյան հեղափոխության 13-րդ տարեդարձի տոնակատարություն օրերին Դոնբասի հանքագործները հերոսական կերպով գրոհ տվին և յիկվիդացիայի յենթարկեցին ամխանանման ձեղքվածքները: Մեր գործարանների և ֆաբրիկաների

հարկածային քրիպայինը մինչև այժմ չտեսնված աշխատանքի տեմպերով զարմացնում են ոտարերկրյա մասնագետներին:

Բանվոր դասակարգը և Խորհրդային Միության բոլոր աշխատավորները գիտեն, վոր իրենց աշխատանքով ստեղծում են լավագույն ազագա իրենց համար, իրենց դասակարգի համար: Աշխատանքը մեղմոտ գնալով եւ ալիլի դառնում է, ինչպես ասում է ընկ. Ստալինը, «պասվի, փառքի, պարծանքի յեվ հերոսության գործ»:

ԳՍՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՔՇՆԱՄԻՆ ԱՆՁՆՑՏՈՒՐ ՉԻ ԼԻՆՈՒՄ

Միայն մենք չենք հաշվում և ստուգում ամին որ, թե ինչպես է իրագործվում սոցիալիստական շինարարության զլխավոր պլանը: Ոտար թշնամական աչքեր նույնպես արթուն և աճընդհատ հետևում են նրան: Կուլակները, նեպմանները, կապիտալիստական հասարակարգի մնացորդները ատելությամբ և սարսափով են գիմավորում սոցիալիզմի յուրաքանչյուր հաղթանակը, մեր ամեն մի հաջողութունը:

Կարո՞ղ են միթե նրանք հաշտ աչքով նայել սոցիալիստական տնտեսության բուռն աճմանը:

— Իհարկե, վոչ: Նրանք դեռ չեն մոռացել այն ժամանակը, յերբ գործարանները, ֆաբրիկաները, հանքերը, բանկերը, հողը—ամեն ինչ պատկանում էր կապիտալիստներին և կալվածատերերին, իսկ միլիոնավոր բանվորներ, բատրակներ և աշխատավոր գյուղացիներ աշխատում էին նրանց համար: Տասնչորեք տարի առաջ մենք խլեցինք կապիտալիստների թալանած հարստությունները, վերցրինք նրանցից հողը,

գործարանները, ֆաբրիկաները և վերջ տվինք նրանց տիրապետությանը: Ամբողջ Ֆրոնտով ծավալվող սոցիալիստական հարձակումը խորտակում է նրանց հույսերը՝ վերադարձնելու անցյալը: Սոցիալիստական շինարարության ամեն մի հաղթանակը շարունակ է նրանց իրենց վերջին դիրքերից: Բուրժուական յեթվորներում մի բուռը կապիտալիստներ ստանում են ժողովրդական ամբողջ յեկամուտի կիսից ավելին: Մեզ մոտ կուլակներին և նեպմաններին բաժին է ընկնում ժողովրդական յեկամուտի 2 տոկոսից վոչ ավելի,— մնացած բոլորը ստանում են բանվորները. և աշխատավոր գյուղացիները: Խորհրդային Միության մեջ գրեթե ամբողջ ժողովրդական յեկամուտը ծախսվում է աշխատավորներին նյութական դրությունը լավացնելու և սոցիալիստական արաագրությունը լայնացնելու վրա:

Մեր թշնամիները տեսնում են, վոր մենք կառուցում ենք սոցիալիստական նոր աշխարհ, ուր տեղ չի կարող լինել շահագործման և կեղեքման համար, վորտեղ կապիտալիստների համար տեղ չկա: Սոցիալիստական վճռական հարձակումն ամբողջ ճակատով վերջնական կորուստ է սպառնում կապիտալիզմի վերջին մնացորդներին մեր յերկրում:

Բայց կարո՞ղ են արդյոք նրանք մոռանալ սուանց կովի, առանց դիմագրության:

Այ ոպորտունիստները քարոզում էյին, վոր մեղմոտ դասակարգային պայքարը աստիճանաբար վերանում է նրանք ասում էյին, վոր կուլակը վոչ միայն չի պայքարի սոցիալիզմի դեմ, այլ ինքը «կենրաճի» սոցիալիզմի մեջ: Չպետք է ճնշել կուլակին, չպետք է

նրա քեֆին դիպչել — ասում է յին աշերը: Մինչդեռ հարցը դրված է ալպիս, ինչպես ասում եր ընկ: Ստալինը կուսակցութեան 16-րդ համագումարում, «համ մենք նրանց՝ շահագործողներին կհնչենք ու կտորենք, կամ նրանք մ.զ՝ ԽՍՀՄ բանվորներին ու գյուղացիներին կհնչեն ու կտորեն»:

Ի՞նչ կլինե՞ր, յեթե կուսակցութունը լսեր կուլակներին պաշտպաններին և վճռական հարձակում չսկսեր կապիտալիզմի մնացորդների վրա: Պարզ է, վոր դրանից կշահվելին միայն մեր թշնամիները: Մենք չեցինք կարողանա ծավալել սոցիալիստական շինարարութիւնը: **Զ** յինք կարողանա անցկացնել յերկրի ինքստորացումը և գյուղատնտեսութեան կուլիտիվացումը: Այ սպորտուսիստները ճանապարհ էյին հարթում կուլակային բնութեան, կապիտալիզմի վերադարձի համար: Սոցիալիզմի հաջող շինարարութիւնն անհնար կլինե՞ր, յեթե մենք վճռական հարձակում չսկսեյինք կապիտալիստական տարրերի վրա:

Ինչպե՞ս տարացման և կուլտուրային շինարարութեան հաջողութիւնները, կուլակութեան յիվիզացիան՝ վորպես դասակարգ՝ համատարած կուլիտիվացման հիման վրա, սոցիալիստական ծավալուն հարձակումն ամբողջ ճակատով առաջ են բերում մեր դասակարգային թշնամիներին կատաղի դիմադրութիւնը: Դասակարգային պայքարը սրվում է: Մեր թշնամիները լարում են բոլոր ուժերը, վորպիսով խանդարին սոցիալիզմի շինարարութիւնը: Նրանք շատ լավ են հասկանում, վոր հինց աչժմ լուծվում է կենինի դբած հարցը: «Ով — ում»:

Կուլակը պայքարել է և պայքարում է հացամթերումների դեմ և պահում է իր հացի ավելցուկները, վորպիսով ուժեղացնի պարենամթերման դժվարութիւնները: Կուլակը կատաղի պայքար է մղել և մղում է կուլիտիվացման դեմ: Կուլակները և չեթակուլակները ագիտացիա յեն մղում կուլտոգներին դեմ, աշխատում են իրենք ներս խցկվել կուլտոգների մեջ. վորպիսով ներսից քայքայեն նրանց, իսկ տեղտեղ ուղղակի ալրում են կուլտոգի շինութիւնները և նույնիսկ սպանում կուլտոգիկներին Ուրալում Ուրյինսկի շրջանի Գրյաչնուխա գ ուղում կուլակները գազանաբար սպանել են գյուղխորհրդի լիազոր բատրակ Գաբովին, վոր ախիվ պայքարում եր կուլակութեան դեմ: Տուտուլմսկի շրջանի Մեսեդ գյուղում կուլակները դիշերով կորատում են կուլտոգի ձիաաբքը, վորտվհատ կուլտոգը պատրաստում եր կարմիր արող հացի համար: Բրջուխովոյ գյուղում կուլակները սպանել են կոմլերիտական Վյատկինին: Նույն աչդ կուլակները սպանել են կուլտոգի չերկու ազնվացեղ ձիերը: Այսպես է գաղաղած կուլակութունը պայքարում կուլտնտեսութիւնների դեմ:

Սորհրդային հիմնարկներում յեղած բյուրոկրատները նուլչպես սգնում են մեր դասակարգային թշնամիներին՝ սոցիալիստական հարձակման դեմ նրանց մղ ծ պայքարում: Մեր տնտեսական հիմնարկներում քիչ չեն հին մասնագետներ — ինժեներներ, պրոֆեսորներ և այլն: Այս մասնագետների մեծ մասը աղքիվ և բարխիդ կերպով աշխատում է սոցիալիստական շինարարութեան ոգտին: Բայց նրանցից շատերը, ոգովելով իրենց պաշտոններից, աշխատել են լատնաբել

սոցիալիստական շինարարութեան գործը: Այդ մասնագեաներից շատերը նախքան հեղափոխութունը չեղել են կապիտալիստական խոշոր ձեռնարկութունների տերեր կամ աղյուծներ— փայտերեր: Շատերը մինչև հեղափոխութունը ունեցել են հարյուր հազարավոր ուղբու կապիտալ, մի քանիսը չեղել են միլիոնատերեր, վոմանք շատ մոտ են յեղել կապիտալիստներին, հավատարմութեամբ ծառայելով նրանց: Բարձր տեխնիկայի այդ մասնագետ գործատերերը յեղել են բուրժուազիայի ամենահավատարիմ ծառաները: Գործաբաններում ու ֆաբրիկաներում նրանք կապիտալի լիազոր գործակատարներն էյին և հոգս էյին քաշում միայն այն մասին, վոր վորքան կարելի յե շատ յեկամուտ պոկեն բանվորներից իրենց տերերի համար: Իհարկե, բավական չաղ պատաններ բաժին էյին ընկնում նրանց կապիտալիստների սեղանից: Բարձր մասնագիտութուն ունեցող ինժեներները ստանում էյին տասնյակ հազարավոր ուղբու ուժիկ և, պարզ է, վոչնչով չէյին զանազանվում թե իրենց կլանքով և թե իրենց դիրքով ու հայացքներով իրենց տերերից, այսինքն խոշոր բուրժուազիայից:

Այդ մասնագեաներից շատերը մինչև հիմա պահել են իրենց հավատարմութունը բուրժուական դասակարգի հանդեպ: Հեղափոխութունը զրկեց նրանց իրենց նախկին դիրքից և ստիպեց աշխատել սոցիալիստական արդյունաբերութեան մեջ: Ֆաբրիկաների և գործարանների տերը դարձավ պրոլետարիատը, այն դասակարգը, վորի վրա կապիտալիստների որոք նրանք նայում էյին վորպես աշխատող անասունի: Այժմ ստիպված են ծառայել այդ պրոլետարներին, վո-

րոնք տառաջել են կապիտալիզմի լուծը: Մասնավոր վոր բանվոր դասակարգը մեծ թափով սկսել է պատրաստել մասնագեաների պրոլետարական սեփական կազրեր, վորոնք փոխարինելու չեն հին մասնագետներին:

Թագցնելով իրենց ատելութունը պրոլետարական հեղափոխութեան հանդեպ, հակահեղափոխական մասնագետները ոգտագործեցին իրենց պաշտոնը խորհրդային հիմնարկներում դավաճանական աշխատանք կատարելու համար: Նրանք ծառայում էյին վոչ թե բանվոր դասակարգին, այլ կապիտալիստներին, վնասելով և ամեն կերպ լանդարելով սոցիալիստական շինարարութունը:

1928 թվին բացվեց հակահեղափոխական մասնագետների վնասարարական կազմակերպութունն ածուխի արդյունաբերութեան մեջ— Դոնրասուռա (Շախտիի գործը): Վնասարարները աշխատում էյին Դոնուզով արեստում և ածուխի արդյունաբերութեան ղեկավար այլ հիմնարկներում, ինչպես և առանձին հանքերի վարչութեան մեջ: Վնասարարների կազմակերպութունը կապ էր հաստատել նախկին հանքատերերի թունը վորոնք փախել էյին արտասահման, ինչպես և սարարները ստանում էյին բոլոր ցուցմունքները և փող իրենց քալքայիչ աշխատանքի համար: Վնասարարները աշխատում էյին քար ու քանդ անել արտադրութունը, պակասեցնել ածուխի հանույթը, չթողնել, վոր զարգանա ածուխի արդյունաբերութունը, լափանել չեղելի ինդուստրացումը:

Նույնպիսի գործունեցութուն ուներ հետագայում

բացված վնասարարական կազմակերպութիւնը տը-
րանսպորտում: 1929—30 թվերին Միացյալ Պետքաղ-
վարչութիւնը բաց արեց մի շարք վնասարարական
կազմակերպութիւններ մեր արդյունաբերութեան դա-
նազան ճշուզելու:

Ամեն տեղ վնասարարները գործում էին նույն
ուղղութեամբ: Նրանք աշխատում էին թույլ չտալ,
վոր զարգանա արտադրութիւնը, նրանք արգելք ե-
յին շանդիստնում նրա աճման տեմպերին, խափանում
էին պլանները, ափելացնում էին բրակը, խանգա-
րում էին ձեռնարկութիւնների ռացիոնալիզացիան:
Պուտիլովի գործարանում վնասարարները, որինակ,
վորոշել էին արակաւորների արտադրութիւնը հըն-
գամյակի վերջում հասցնել տարեկան 3000-ի: Իսկ
յերբ նրանց զովելի գործը բացվեց և իրենք ել ձեռ-
բակալվեցին, գործարանը միայն հնգամյակի մի տա-
րում տվեց 12.000 արակաւոր:

Վերջերս լեբան հանվեցին և գնդակահարվեցին
վնասարարներ մեր այն հիմնարկներում, վորոնք վա-
րում են մթերքների (միս և ձուկ) մատակարարման
գործը: Վնասարարներն իրենց ստոր աշխատանքի հա-
մար փող էին ստանում ոտարերկրյա կապիտալիստ-
ներից: Կապիտալիստների հրահանգներով նրանք
փորձում էին սով առաջ բերել մեր լեբկրում, խան-
գարել և խափանել աշխատավոր մասսաների պարե-
նավորումը, ղժվարութիւններ առաջ բերել մթերք-
ների փոխարկութեան մեջ և այլն:

Այս բազմաթիւ վնասարարական կազմակերպու-
թիւնները սերտորեն կապված էին արտասահմանի
պիտակ գվարդիական կազմակերպութիւնների և

ոտարերկրյա կապիտալիստների հետ: Նրանք շարու-
նակ հարաբերութեան մեջ էին նրանց հետ: Սոցիա-
լիստական շինարարութեան մեջ բալքայիչ աշխատանք
կատարելով նրանք միաժամանակ կատարում էին
լրտեսական աշխատանք խմպերիալիստների ցուց-
մունքներով: Իսկոր վնասարարներին համախմբում և
նրանց գործունեութիւնը ղեկավարում եր այսպես
կոչված «Արդյունաբերական կուսակցութիւնը», վոր
վերջերս բացվեց պրոլետարական դիկտատուրայի ար-
թուն պահակի՝ ՄՊԳՎ ի կողմից:

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՎՈՇԵՂԱՓՈՆՈՒԹՅԱՆ ԿՈՒՅԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

«Արդյունաբերական կուսակցութիւնը» համա-
խմբում եր բոլոր վնասարարական կազմակերպութիւն-
ները: Նրա գլխին կանգնած եր Պալլինսկին, կեկես-
կու բուրժուական կառավարութեան նախկին մինիստր:
1917 թվի հոկտեմբերյան որբերին Պալլինսկին Պե-
տերբուրգի ղեներալ-նահանգապետն եր և ղեկավա-
րում եր ձմեռային պալատի պաշտպանութիւնը, վոր-
տեղ ապաստանել եր բուրժուական կառավարութիւ-
նը՝ ընդդէմ ապստամբ բանվորների, ղինվորների և
նավաստիների: Յերբ Պալլինսկին Պետքաղվարչու թեան
կողմից գնդակահարվեց վսակու և պլատինի արդյու-
նաբերութեան մեջ վնասարարութիւն կատարելու
համար՝ նրա տեղը բռնեց Ռամզինը:

Վնասարարական «Արդյունաբերական կուսակ-
ցութեան» կենտրոնական կոմիտեյի կազմի մեջ մտնում
էին կապիտալիստական խոշոր գործարարներ, վորոնք
մինչև հեղափոխութիւնը ունէին բարձր դիրք: պրո-

Ֆեաոր Ռամզին, պրոֆ. Կալիննիկով, ինժեներ Լա-
րիչև, պրոֆ. Զարնեցկի, ինժ. Կուպրիանով, պրոֆ.
Ֆեդոտով և այլն: Մրանք բոլորն ել ունեցին պատաս-
խանատու պաշտոններ մեր կենտրոնական տնտեսա-
կան կազմակերպություններում, Պետպլանում, ժողո-
վրդական տնտեսության զերտգույն խորհրդում և
այլն: Արդյունաբերության ամեն մի ճյուղում նրանք
ստեղծում ելին վնասարաք կենտրոններ այն մասնա-
գետներին, վորոնք գրավում ելին ղեկավար պաշտոն-
ներ տնտեսական որգաններում: Յուրաբանչյուր այդ-
պիսի կենտրոն կապ եր հաստատում այն հակահեղա-
փոխական մասնագետներին հետ, վորոնք աշխատում
ելին արդյունաբերության այդ ճյուղի տրեստներում,
ձեռնարկներում և շինարարությունների մեջ: Այս ճա-
նապարհով «Արդյունաբերական կուսակցությունը» իր
վնասարար շոշափուկները տարածել եր ամեն տեղ
Նա ունեւր ընդամենը 2000 անդամ:


Սկզբում վնասարարներն աշխատում ելին միայն
պանդանել իրենց նախկին տերերի ձեռնարկություն-
ները: Նրանք ջանք ելին թափում նույնիսկ լավացնել
այդ ձեռնարկությունները պրոլետարական պետու-
թյան հաշիւին: Վնասարարները հույս ունեցին, վոր
խորհրդային իշխանության տապալումից հետո, վոր
նրանք պատրաստում ելին, կապիտալիստները հետ
կստանան իրենց գործարաններն ու Փարբիկաները
վոչ միայն անվնաս զրուծյան մեջ, այլև ավելի հա-
ստութաբեր, նոր մեքենաներով և սարքավորումով:
Բայց խորհրդային իշխանությունը, տնտեսությունը
վերականգնելով պատերազմյան չափերի, ել ավելի
լաչն ծավալեց սոցիալիստական շինարարությունը:

43291-63

Մեր տնտեսության անումը, խորհրդային Միության
պաշտպանունակության ամբաջումը, ինդուստրացման
հաջողությունները ստիպեցին վնասարարներին փոխել
իրենց գործելակերպը: Նրանք հասկացան, վոր բուր-
ժուական տերերի վերադարձի վրա հույս չէա, չեթե
նրանք չձեռնարկեն ակտիվ հակահեղափոխական աշ-
խատանքի: Զրոյել, վոր խորհրդային Միությունն սեփ-
ղանա, բոլոր ուժերով խանգարել վեր սեփսուրյան ա-
նուր, բոլոր միջոցներով խափանել սոցիալիստական
եփնարարարչուրնը, — ահա ինչ նպատակ եր դրել իր առաջ
«Արդյունաբերական կուսակցությունը»: Վնասարարներն
ուզում ելին կազմալուծել մեր տնտեսությունը, վոր-
պեսզի հաջողեցնեն պրոետարական դիկտատուրայի
անկումը: Բայց բուրժուական այդ շոչկան հասկանում
եր, վոր իր ուժից վեր ե կովել խորհրդային իշխա-
նության դեմ, վորին անձնվերաբար պաշտպանում են
միլիոնավոր աշխատավորներ: Իրա համար նա իր բո-
լոր ուժերը դրել եր ոտաբերկրյա իմպերիալիստների
վրա: «Արդյունաբերական կուսակցություն» զլխա-
վար Ռամզինը իր ցուցմունքների մեջ ասում ե.

«Արդյունաբերական կուսակցություն» գործու-
նեյության հենց սկզբից՝ նրա հիմնական ուղղությունն
եր դեպի ոտաբերկրյա աղամական միջամտությունը
(ինտերվենցիա) խորհրդային Միության դեմ»:

Հույս ունենալով, վոր ոտաբերկրյա իմպերիա-
լիստների օլիխներով կհաջողվի տապալել խորհրդային
իշխանությունը, վնասարարները մանրամասն քննում
ելին ապագա պետական կարգի հարցը: Նրանցից շա-
տերն ուղղակի պաշտպանում ելին միապետությունը:
Սակայն «Արդյունաբերական կուսակցություն» ան-



դամները մեծամասնութիւնը զստնում էր, վոր իսկուցն չի կարելի վերականգնել միապետութիւնը: Դրա համար կանգ առան բուրժուական հանրապետութեան վրա, բայց վորոշեցին, վոր պաշտամենտը պետք է ընտրվի աշնպես, վոր ապահովվի լիովին պատգամավորների բուրժուական կազմը:

Բայց պետք է նկատի ունենալ, վոր ֆուսարարները ուզում էին բուրժուական հանրապետութեանն անցնել միայն այն ժամանակ, յերբ կապիտալիզմը վերջնականապես կհաստատվեր: Հակահեղափոխական հեղափոխումից հետո, սկզբնական օրջանում նրանք ուզում էին հուսուցել ռուսական դիկտատուրա, վորպեսզի մաքրեն հաշիվները կոմունիստների, բանվորների յեվ բոլոր աշխատավորների հետ: Ռազմական դիկտատորի պաշտոնի համար «Արդունարեբրական կուսակցութիւնը» նշում էր Պալչինսկուն:

Նուսալով, վոր ինտերվենցիան շուտով հաջողութիւն կունենա, ֆուսարարները դեռևս 1928 թվին սկսեցին պատրաստել ապագա կապիտալիստական Ռուսաստանի կառավարութիւնը: Կառավարութեան նախագահի պաշտոնի համար նշված էր նույն Պալչինսկին: Ռազմական մինիստր էր նշանակվելու գնեբրալ Լ. Լևոնսկին, վորը քաղաքացիական պատերազմի ժամանակ Դենիկինի շտաբի պետն էր: Այդ ֆաշիստական կառավարութեան մինիստրական մյուս պաշտոնների համար վորոշված էին նախկին գործարանատեր Ռչարուշինսկին, Մոսկվա-Կազան յերկաթուղու նախկին տեր Մեկկը, նախկին հանքատեր Ռարինովիչը և այլն: 1929 թվին ֆուսարարները ապագա մինիստրների ցուցակում ավելացրին գեներալ Դենիկինին, բուր-

ժուական կապետական կուսակցութեան հիմնադիր և պարագլուխ Միլյուկովին և ամենախոշոր կապիտալիստներ՝ Կոնովալովին, Դենիսովին, Տրետյակովին և այլն: Սեյմ հարյուրակալին ցարական գեներալներ յեվ կապիտալի ներկայացուցիչներ—ահա քե վարոց էր ուզում «Արդունարեբրական կուսակցութիւնը» նստեցնել աշխատավորների օյնֆին, ահա քե ովքեր էին վերականգնելու բուրժուազիայի իշխանութիւնը մեք յերկրում: Փաշիզմ—ահա «Արդունարեբրական կուսակցութեան» ծրագիրը:

«Արդունարեբրական բնագավառում—ասում է իր ցուցմունքներում հակահեղափոխական շախմախ պարագլուխ Ռամզինը, —հիմնական սկզբունքն էր վերադարձնել ձեռնարկութիւնները իրենց նախկին տերերին»: Բայց այստեղ ֆաշիստ-ֆուսարարների առաջ ծագեցին խոշոր դժվարութիւններ: Հին ձեռնարկութիւններէց միքանիսը այժմ արդեն լուծարքի չեն լինթարկված, իսկ վոմանք ընդհակառակը լայնացվել են: Միքանի ձեռնարկութիւնների արժեքը միքանի անգամ բարձրացել է նրանց վերականգնումից և վերասարքավորումից հետո:

Վերջապես, խորհրդային իշխանութիւնը կառուցել է բազմաթիւ նոր գործարաններ, վոր չգլխային ում վերադարձնեն: «Արդունարեբրական կուսակցութիւնը» մտածեց մի այսպիսի յեղք այդ դրութիւններից: Բոլոր նոր և հիմնովին վերակառուցված գործարանները պետք է հանձնելին կապիտալիստական, փայտաբրական ընկերութիւններին: Փաշիստական կառավարութիւնը պետք է ակցիաներ բաց թողներ այդ գործարանները ամբողջ արժեքի դիմաց, իսկ տերերը,

նուս և ոտարերկրյա կապիտալիստները, այդ ակցիաներով պիտի ստանային իրենց նախկին գործարաններէ լիովին արժեքն ու աշխատող տեր դառնալին նոր գործարաններին, ֆաբրիկաներին, հանքերին, չերկաթուղիներին և երկաթուղայաններին: Ահա թե ինչ պէս «Արդյունաբերական կուսակցութեանը» մտադիր եր բուրժուազիային հանձնել ամբողջ արդյունաբերութեանը: Վերակազմել կապիտալիզմը, վերականգնել նախկին սեփականատերերին, — անա «Արդյունաբերական կուսակցութեանը» ծրագիրը:

«Գյուղատնտեսութեան բնագավառում, — ասում եյին ֆրասարարներն իրենց ցուցմունքներում, — հիմնական նպատակն եր ուժեղացնել անհատական տնտեսութեանները, մասամբ հետ գնելով հողը նախկին կալվածատերերէրց»: «Արդյունաբերական կուսակցութեանը» ֆաշիստները հասկանում եյին, վոր ալլիս վոչ մի կիրպչի կարելի հողը խլել գյուղացուց և վերադարձնել կալվածատերերին: Դրա համար նրանք մտադիր եյին միայն հողի մի մասը հետ գնել և վճարել կալվածատերերին նրանց կալվածներէ արժեքը: Վնասարարները հուշը դրել եյին կուլակի վրա և մտադիր եյին զարգացնել անհատական առանձնացած տնտեսութեաններ: Հողը հետ գնել կարվածատերերից, ուժ քալ կուլակից — անա «Արդյունաբերական կուսակցութեանը» ագրարային ծրագիրը:

Վնասարարների պարագլուխ Ռամզիենն ուղղակի ասում ե, վոր իրենց ծրագիրը պաշտպանում եր «արդյունաբերական բուրժուազիային և անհատական ամուր տնտեսութեանը (այսինքն կուլակային)»:

«Արդյունաբերական կուսակցութեանը» սերտ

կապ եր հաստատել մի այլ ֆրասարարական կազմակերպութեան, այսպէս կոչված «Գյուղացիական կուսակցութեան» հետ: Այսպէս եյին կոչում իրենց հակահեղափոխական կուլակային կազմակերպութեանը նրան ստեղծող ֆրասարարները — նախկին ետերներ և կազեմներ՝ Կոնդրատյեվ, Չայանով, Յուրովիչի և այլն:

Վնասարարական այս կազմակերպութեանը իր ծրագրով և գործելակերպով դրեթե վոչնչով չեր դաճաղանվում «Արդյունաբերական կուսակցութեանը»: Կոնդրատյեվականները նույնպէս պատրաստում եյին ռազմական միջամտութեան և նպատակ ունեյին վերականգնել կապիտալիզմը: Բնայց «Արդյունաբերական կուսակցութեանը» իր ֆրասարարական ցանցը հյուսում եր արդյունաբերութեան շուրջը, իսկ կոնդրատյեվականները իրենց բունը դրել եյին գյուղատնտեսական բարձրագույն որդաններում (Հողօդկամատ, Պետպլանի գյուղատնտեսական սեկցիա և այլն): Կոնդրատյեվի կազմակերպած կուլակային կուսակցութեան աշխատում եր բոլոր միջոցներով արգելք հանդիսանալ գյուղատնտեսութեան կուլակալիցամանը և կուլակութեան վերացմանը՝ վորպէս դասակարգի վնասարարները ձեռք եյին առնում բոլոր միջոցները, վորպէսզի ճանապարհ բաց անեն կուլակի հաղթանակի համար գյուղատնտեսութեան մեջ: Կոնդրատյեվականների և «Արդյունաբերական կուսակցութեանը» հետ ձեռք-ձեռքի տված գործում եր նաև մենշեիկները (Գրոման, Սուխանով և այլն) հակահեղափոխական խումբը, վորոնք աշխատում եյին մեր պլանային որդաններում:

Բանվոր դասակարգի բոլոր թշնամիները, հակահեղափոխական բոլոր ուժերը միացել եյին պայքարե-

լու համար խորհրդային իշխանության դեմ: Սոցիալիստական հարձակման հաջողություններն ստիպում էին նրանց ստեղծել միասնական ճակատ, պատրաստելու գինված հարձակում իմպերիալիստների կողմից ԽՍՀՄ-ի վրա, ոպես իրտերվնաներին՝ վերականգնելու կապիտալիզմը մեր չեղկրում:

Հասկանալի չե, վոր բուրժուական հակահեղափոխության ծրագրերը, մշակված «Արդյունաբերական կուսակցության» կողմից, չե կարող կողմնակցներ գտնել ԽՍՀՄ-ի մեջ: Դրա համար ֆլաստարների հացացքներն ուղղված են ին արտասաման: Հեղափոխությունից հետո աջտեղ փախած կապիտալիստները չեյին դադարել և չեին դողարում հույս ունենալուց, վոր բուրժուական հասարակակարգը նորից կհաստատվի ԽՍՀՄ-ի մեջ և իրենք նորից տեր կլինեն իրենց գործարանների: Նրանք արտասամանում միացան նախապատերազմյան արդյունաբերության խոշոր պարապլուխները ղեկավարության տակ և Փարիզում կազմակերպեցին իրենց «Առևտրա-արդյունաբերական կոմիտեն»: Այս կոմիտեի մեջ մտան Ռյարուշինսկին և Կոնովալովը (նախկին խոշոր գործարանատերեր), Նորելը և Մանթաշեր (նախկին հավթարդյունաբերողներ), Մեշչերսկի (Սորմովոյի նախկին գործարանատեր), Ինիզով (մետաղագործարանների նախկին տեր) և այլն: Այս խոշոր կապիտալիստները, վորանց պրոլետարական հեղափոխությունը վաճուղել է մեր չեղկրից, պահպանել էյին իրենց կապիտալներին մի մասը, վոր պահեք տրված ոտարերկրյա ըանկերին: Բացի դրանից նրանք բուրժուական գրեթե փոքր ունեն արտասամանի կապիտալիստական զանազան ձևնարկությունների մեջ:

Դրա համար սպիտակ գլխորդիտուն «Առևտրա-արդյունաբերական կոմիտեն» սերտ կերպով կապված է միջազգային կապիտալի հետ: Անգլիական նախալին «Թագավոր» Դետերդինզը, մեր Ուրալի շատ հանքերի նախկին տեր Ուրկլարտը, Ստալինյան գործաբանների նախկին տերերը և բազմաթիվ ոտարերկրյա այլ կապիտալիստներ սգնում են ուսական բուրժուազլայի «Առևտրա-արդյունաբերական կոմիտեիին»:

Վնասարարներն ամուր կապեր էյին հաստատել այդ կոմիտեի հետ և նրանից ստանում էյին ցուցմունքներ իրենց հակահեղափոխական աշխատանքի վերարբմամբ: Իրենց պաշտոնական գործուղումների ժամանակ արտասամանում նրանք կանոնավոր կապ էյին հաստատում նախկին գործաբանատերերի հետ, զեկուցում էյին նրանց Խորհրդային Միության մեջ գործերի ընթացքի վերարբմամբ և խորհրդակցում էյին հետապա գործողությունների մասին: Որինակ, ֆլաստարները Փարիզում «Առևտրա արդյունաբերական կոմիտեիին» զեկուցեցին «Արդյունաբերական կուսակցության» մասին և լիովին հավանություն ստացան Ռյարուշինսկուց:

Ցուցմունքները հետ միասին ֆլաստարների խումրը նախկին կապիտալիստներից ստանում էր նաև դրամ իր քաջբայիչ աշխատանքի համար:

Վնասարարները խոստովանեցին, վոր մեկ ու կես արվա ընթացում (1928 թ. վեդեբից մինչեվ 1930 թ. գուունր) «Արդյունաբերական կուսակցուրյունը» Փարիզից սացել է 1.600.000 ուրբի:

Իսկ ի՞նչ հրահանգներ էյին ստանում ֆլաստարներն իրենց տերերից:

«Արդ. կուսակցութեան» պարագլուխ Ռամզինն իր ցուցմունքներում ասում է այսպես. —

«Արդյունաբերական կուսակցութունը» «Առևտրա-արդյունաբերական կոմիտեյի» («Տորգպրոմ») հետ համաձայնութեան գալով, բաժանել էր ինտերվենցիա պատրաստելու աշխատանքը «Տորգպրոմի» և իր միջև հետևելով ձևով: «Տորգպրոմը» վարում էր ռազմական միջամտութեան (ինտերվենցիա) արտաքին ամբողջ պատրաստութեանը, այսինքն՝ բոլոր բանակցութեանները ոտարերկրյա կառավարութեաններին, գլխավորապես Ֆրանսիայի և Անգլիայի հետ, արժաստանմանում ազիտացիա և սրբապահանգ եր մղում ինտերվենցիայի սգտին, ինչպես նաև պետք է միջոցներ գտնե՞ր Ֆինանսավորելու ինտերվենցիան և իր վրա լեր վերցրել նրա ռազմական մասի կազմակերպութեանը ոտարերկրյա պետութեաններին ոգնութեամբ: «Արդյունաբերական կուսակցութունը» ինտերվենցիան պատրաստում էր իՄՇՄ-ի ներսում, արհեստական կերպով տնտեսական կրիզիսներ ստեղծելով և խորացնելով ու ամեն կերպ ներսից ոժանդակելով ինտերվենցիային: Այս նպատակով «Տորգպրոմի» հրահանգի համաձայն և սեփական նախաձեռնութեամբ «Արդյունաբերական կուսակցութեան» կենտրոնական կոմիտեն կապ հաստատեց ոտարերկրյա գլխավոր շտաբների հետ:

Ինչպես պատրաստել ինտերվենցիան, ինչպես ոգնել ինտերվենցիա կազմակերպողներին — ահա թե ինչի մասին էլ ին պայմանավորվում էր պատրաստները նախկին կապիտալիստների հետ: «Արդյունաբերական կուսակցութեան» իսկական տերը միջազգային իմպերիալիզմն էր, վոր պատրաստում էր զինված հարձա-

կում Խորհուրդների լերկրի վրա: Նրա ցուցմունքով գործում էլ ին ոռա կապիտալիստները, իրենց կենտրոնը ստեղծելով Փարիզում: Նրա հրամաններով էլ ին գործում նաև հակահեղափոխական ֆեաստարները իՄՇՄ-ի մեջ, կապ հաստատելով իմպերիալիստների ռազմական շտաբների հետ:

ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԸ ԻՆՏԵՐՎԵՆՑԻԱ ՅԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Վ. Ի. Լենինը շատ անգամ հիշեցնում էր մեզ, վոր «պրոլետարիատի դիկտատուրան ամենադժան, ամենակասողի պայխարն է, յեր պրոլետարիատը սխալված է կռիվ մղել ամբողջ աշխարհի դեմ»:

Կապիտալիստական ամբողջ աշխարհի դեմ մղված այս պայքարն սկսվեց պրոլետարական հեղափոխութեան հենց առաջին որերից: Հոկտեմբերյան հեղափոխութեանը կապիտալի իշխանութեանից լսեց յերկրագնդի $\frac{1}{6}$ մասը:

Միջազգային կապիտալը զրկվեց հսկայական շուկաներից և հուժույթի հարուստ աղբյուրներից: Նա զրկվեց 17 միլիարդ ցարական պարտքերից և ռազմաթիվ ձեռնարկութեաններից, վորոնց տերերն էլ ին ոտարերկրյա կապիտալիստները Ռուսաստանում:

Հոկտեմբերյան հեղափոխութեան ամբողջ աշխարհի աշխատավորներին ազատութեան ճանապարհ ցույց տվեց և մեր յերկիրը դարձրեց միջազգային պրոլետարիատի հայրենիքը, համաշխարհային հեղափոխութեան ոջախը: Ահա թե ինչու իմպերիալիստները քաղաքացիական պատերազմի ժամանակ թափում էլ ին բոլոր ջանքերը, վորպեսզի լսեղեն խոր-

հրդալին իշխանությունը, զենքով, ռազմամթերքով և զբամով ոգնելով սպիտակ գվարդիականներին: Նրանք փորձեցին նաև իրենց զորքերին քշել մեր դեմ: Անգլիան քաղաքացիական պատերազմի սկզբում գրավեց Արևանդեղակը և նրան կից շրջանները: Նա նույնպես սկսեց ալրապետել Կովկասը: Ֆրանսիան իր զորքերը ափ հանեց Ողեսսա և Ղրիմ ու մի ամբողջ նավատորմ ուղարկեց Սև ծովը: Յապոնիան հսկայական տարածություններ զբավեց Սիբիրում և Հեռավոր Արևելքում: Ամերիկան նույնպես մասնակցեց ինտերվենցիալին հյուսիսում և Հեռավոր Արևելքում:

Մենակ ֆրանսիական ինտերվենտները Խորհրդալին Միության հարավում սպանեցին և տանջեցին 30.000-ից ավելի աշխատավորներ, վիրավորեցին և հաշմանդամ դարձրին 60.000 մարդուց ավելի, թալանեցին և ավերեցին մոտ 240.000 ազգաբնակչություն: Բայց ինտերվենտների բոլոր գազանությունները, նրանց բոլոր ջանքերը վոչ մի նպատակի չհասցրին: Նրանց զորքերը հրաժարվեցին կովի Կարմիր բանակի դեմ: Ամբողջ աշխարհի բանվոր դասակարգը թույլ չտվեց իմպերիալիստներին խեղդել խորհրդային իշխանությունը: Բայց կռիվը սրանով չվերջացավ: Կապիտալիստները վոչ մի բույն չեն հրաժարվում մեզ վրա հարձակվելու մտքից:

Վ. Ի. Լենինը 1920 թվին ասում էր. «Համաշխարհային իմպերիալիզմի փորձը՝ պատերազմի միջոցով մեզ խեղդելու՝ լիակատար պարտություն կրեց: Բայց պե՞տ է հիսել, վաղ կապիտալիստական ամբողջ աշխարհի վաճառքի միջով գլխի զինված է յեվ սպասում է հարձակման, ընտրելով ռազմագիտական լավագույն պայման-

ներ, հետազոտելով հարձակման յեղանակները: Համաշխարհային մասշտաբով դեռևս բույլ՝ մեկն արագ կերպով ամուսնեց, ուժեղացավ, բեկամուց խլում գեներգեմքի յեսելից, բայց բեկամուն արբուն հսկում է ևստերդային հանրապետությանը ամեն փայլափայտում:

Արդեն տաս տարի յե անցել աչն որից, յերբ Լենինն ասում էր այդ: Մենք այժմ շատ ավելի ուժեղ ենք, բայց վտանգը չի պակասել: Թշնամին առաջվա պես արթուն հսկում է մեր անեն քաղաքիսին: Ամբողջ աշխարհի կապիտալիստները շատ լավ են հառկանում, վոչ լեթե իրենց հաջողվի խեղդել Խորհրդային Միությունը, նրանք ծանր հարված հասցրած կլինեն միջազգային պրոլետարական հեղափոխությունը: Մեզ մոտ վերականգնելով կապիտալիստական հասարակակարգ, նրանք կխլին մեր շուկաները և մեր հումուսթը ու կտալպելին ԽՍՀՄ-ի 150 միլիոն աշխատավորներին աշխատել իրենց համար: Վերականգնելով մեզ մոտ կապիտալիստական հասարակակարգը, նրանք ավելի հեշտ կերպով վերջ կտալին Արևելքի ճնշված ժողովուրդներին հեղափոխական շարժմանը:

Համաշխարհային տնտեսական կբիսը, հեղափոխական շարժման աճումը կապիտալիստական յերկրներում, սոցիալիստական շինարարության հաջողությունները ԽՍՀՄ-ի մեջ—այս ամենը զբոլում են իմպերիալիստներին և ստիպում են նրանց շտապեցնել ինտերվենցիայի պատրաստությունը: Կրիզիսը գնալով ավելի քայքայում է քանդում է կապիտալիզմի փտած հիմքերը: Հեղափոխական շարժման վերելքը սպասում է չեջի կապիտալիստական հասարակակարգը: Իսկ մեր հաջողությունները, մեր հաղթանակ-

ները սոցիալիստական շինարարութեան ֆրոնտում ել
ավելի ամրապնդում են համաշխարհային հեղափոխու-
թեան ուժերը:

«Վայ Յեկրոպային, լեթե հնգամյա պլանը իրա-
գործվի», — գրում են բուրժուական թերթերը:

Իմպերիալիստները գիտեն, վոր սոցիալիզմի հա-
ջողութունները մահվան դատաւճիռ են ամբողջ աշ-
խարհի կապիտալի համար: Ահա թե ինչու վերջերս
բոլոր կապիտալիստական լերկրներում կատաղի կամ-
պանիա յե մղվում Խորհուրդների լերկրի դեմ:

Իմպերիալիստները կանգ չեն առնում վոչ մի
պրովոկացիայի առաջ, լերբ Փարիզում անհայտացավ
սպիտակ գվարդիական զեներալ Կուտեպովը, բուրժու-
ական բոլոր թերթերը վայնասուն բարձրացրին, թե
նրան «փախցրել են» խորհրդային ներկայացուցիչ-
ները: Գարնանը, լերբ Վարշավայի մեր ներկայացու-
ցիչներին վրա մահափորձ կատարվեց — լերբորդ մահա-
փորձը, — իհական կառավարութունը վոչինչ չարավ
այդ գործը քննելու համար: Լեհական թեթերը գրում
եյին նույնիսկ, վոր բայլիկները «դիտմամբ» իրենց
շենքում դրեկ յին մի խոշոր ուղմը և ուզում եյին
իրենք իրենց պալթեցնել, վորպեսզի տհաճութուններ
պատճառեն լեհական կառավարութեանը:

Կապիտալիստների հրամանով Հոտմի պապը և
բոլոր լեկեղեցիների տերտերները ահա մի ամբողջ
տարի յե վայնասուն են բարձրացրել, թե կրոնը «հա-
լածվում յե» Խորհրդային Միութեան մեջ, և կոչ են
անում խաչակրաց արշավանք սկսել մեր դեմ: Նույն
կապիտալիստների հրամանով սոցիալ-ֆաշիստները
չճում են, թե Խորհրդային Միութեանը ինքն և ուզում

հարձակվել իմպերիալիստների վրա: Բուրժուական
թերթերը գրում են, թե նույնիսկ համաշխարհային
կրեկլսը և գործադրութունը սարքված են բայլիկ-
ների կողմից: Այս ամբողջ կախացիան մղվում և մեր
եմ զինված հարձակում պատրաստելու նպատակով:

Բայց կապիտալիստները միայն ադիտացիայով
չեն գրադվում: Նրանք ուժեղ կերպով դիմում են մեր
հարևաններին, մանավանդ Լեհաստանին և Ռումինիա-
յին: Լեհաստանում Պիլսուդսկու ֆաշիստական կառա-
վարութունը շարունակ գրադված և միևնույն գոր-
ծով — պատրաստվում և հարձակվել Խորհրդային Մի-
ութեան վրա: Ռումինիայում այս տարի տեղի ունե-
ցավ ֆաշիստական հեղաշրջում, վորից հետո առանձ-
նապես ուժեղացավ պատերազմի պատրաստութունը
մեր դեմ: Ֆաշիստական դիկտատուրա հաստատվեց
նաև Ֆինլանդիայում, վորտեղ նույնպես դիմված հար-
ձակման պատրաստութուն են տեսնում ԽՍՀՄ-ի դեմ:
Լեհաստանի և Ռումինիայի — հակախորհրդային ֆրոնտի
զլխավոր «հարվածայիններին» միջև ռազմական սերտ
դաշինք և կնքված: Նրանք միասին պատերազմի պլան
են մշակում Խորհրդային Միութեան դեմ: Ֆրանսիան
նույնպես ռազմական դաշինք և կնքել Լեհաստանի
հետ՝ ուղղված մեր դեմ: Այս դաշինքով Ֆրանսիան
պատերազմի ժամանակ զենք և ռազմամթերք և մատա-
կարարիլու Լեհաստանին և տալու յե իր զեներալների
ոգնութունը բանակի ղեկավարութեան համար: Ֆրան-
սիան և Լեհաստանը բոլոր ուժերով ձգտում են այժմ
հակախորհրդային դաշինքի մեջ ներգրավել Մերձ-
բայլայան պետութունները՝ Եստոնիա, Լատվիա, Ֆին-
